ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. փետրվարի 8-ից 10-ը Վրաստան (ք. Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստան՝ ք. Թբիլիսի, փետրվարի 8-ից 10-ը

4. **Հրավիրող կողմը.**

«ՏՐԱՍԵԿԱ» մշտական քարտուղարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցել «ՏՐԱՍԵԿԱ» Միջկառավարական հանձնաժողովի 16-րդ տարեկան հանդիպմանը և «ՏՐԱՍԵԿԱ» Միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության հանդիպմանը:

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկվել են կազմակերպության ընթացիկ հարցերը, մասնավորապես՝ մուլտիմոդալ փոխադրումների զարգացման, սահմանների հատման ընթացակարգերի պարզեցման, ջրային փոխադրումների զարգացման, հետագա ինստիտուցիոնալ զարգացումների, սահմանների հատման «Թեժ գծի» հայեցակարգի, ավտոմոբիլային հսկման կետերի գնահատման, վիճակագրական տվյալների, «ՏՐԱՍԵԿԱ» հիմնադրամի, Գործադիր Խորհրդի և թվայնացման աշխատանքային խմբի ստեղծման վերաբերյալ հարցեր:

Անդրադարձ է կատարվել նաև 2018-2021թթ. ռազմավարության կատարողականին, միջազգային պայմանագրերին միանալու, միջազգային կազմակերպությունների հետ հուշագրերի կնքման նպատակահարմարության և այլ հարցերին:

Քննարկվել է նաև «Թբիլիսյան հռչակագրի» տեքստը, որը քննարկումների արդյունքում չընդունվեց: Որոշվեց «Թբիլիսյան հռչակագրի» համաձայնեցումը իրականացնել դիվանագիտական խողովակներով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կայացել է «ՏՐԱՍԵԿԱ» Միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության գլխավոր քարտուղարի ընտրությունը: Այդ պաշտոնում վերընտրվել է Ասետ Ասավբաևը:

Հանդիպումներ են տեղի ունեցել «ՏՐԱՍԵԿԱ» Միջկառավարական հանձնաժողովի մասնակիցների հետ: Քննարկվել են տրանսպորտային ոլորտում երկկողմ հարաբերությունների զարգացման վերաբերյալ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկումների արդյունքում կազմվել է համապատասխան արձանագրություն, որի օրինակը կուղարկվի դիվանագիտական ուղիներով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվում է «Թբիլիսյան հռչակագրի» տեքստը ստանալուց հետո կազմակերպել համատեղ քննարկում շահագրգիռ մարմինների հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

14.02.2023